



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22864-

22870

378

0-79

50

Printed in Turkey

2002

Մ. ԿՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Ա.ԶԱՏ ԲԵՄԻ ԽՕՍՔԵՐ

Ա. ՇԱՐՔ

Արդիւնք յսկացուած է Միացեալ Ընկերութեանց
Քեսապի երկսեռ վարժարանաց
աղբաս ուսանողներու սնունդին



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1912

Մ. ԳՈՒՅՈՒՄՃՅԱՆ

9 (47.925) —

ԱԶՍՏ ԲԵՄԻ ԽՕՍՎԵՐ

Ա. ՇԱՐՔ

Արդիւնք յասկացուած է Միացեալ Ընկերութեանց
Քեսապի Երկսեն վարժարանաց
աղբաս ուսանողներու սնունդին




Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԱՏԹՂՈՍԵԱՆ

—
1912

8176

6749.57



ՔԷՍԱՊՅԻ ՈՐԲ ՏՂԱՅ ՄԸ

Հեզ ու քուտան , այլ մտացի
Փոքրիկ տղայ մ'եմ ֆեսապցի ,
Միսֆու է քափուր , փորքս նօքի ,
Ուսում միայն ինձ շամբուի :

Պատան մը հացի ան միտ կարօս ,
Կրնա՞յ տկալ տրկար անօք ,
Մարմինը իր ծիւրած մաւած ,
Վրտեքու տակ լալահառաչ ,

Խնդրեմ տուէ՛ք քիչ մըն ալ սնունդ ,
Պատրք գգալով Ձեր ամենուդ ,
Հայրս զարկին արտահալած
Մօրս ալ մնաց լոկ կոծ ու լաց :

ԱԶԱՏ ԲԵՄԻ ԽՕՍՎԵՐ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

(Խօսուած Ռոսոսքոյի Ազգ. Լսարանին մեջ)

24 Նոյեմբեր, 908

Արդեօք գալ՞ու է մի օր, ժամանակ
Մասիսի գըլխին տեսնել մի դրօշակ
Եւ ամէն կողմէ պանդուխտ հայազգիք
Դիմեն դէպի իրենց քաղցր հայրենիք:

ԲԱՅՅԻ

Հարենակիցներ

Մարմարայի այս ափին վրայ տարաշխարհիկ տուն-
կերու պէս եկած հաստատուած են ձեր պապերը,
մշտնջենական փոթորիկներէն եւ մրրիկներէն հողմա-
վար այն լեռնակղզիէն, որ Հայաստան կը կոչուի:

Այն երկիրը մեր ամենուս հայրենիքն է, ուստի
հայրենաբաղձութեան մորմոքներուն մէջ սրտատրոփ՝
անոր վրայ տեղագրական ծանօթութիւններ լսելու եւ
իմանալու ձեր բուն փափաքը շատ բնական կը զրտ-
նեմ: Եւ քանի որ այսօր այս բեմէն խօսելու պատիւը
եղաւ ինձի, առիթը չեմ փախցնէր:

Հիանալի դիրք ունի Հայաստան, ուշագրաւ են

մանաւանդ իր գեղեցիկ տափաստանները, կանաչորակ բլուրները եւ լայնանիստ լեռնադաշտերը, որոցմէ ումանք ծովու երեսէն 4,800—5,000 մէթր բարձրութիւն ունին: Լեռներու այս պարերուն մէջ անշատ կը մնայ Մասիսը, կոնաձեւ է ան եւ հսկայ սփինքսի մը կը նմանի որ կարծես անթարթ աչքով կը հսկէ հեռու հորիզոնները՝ Բարձր Հայքէն Փոքր Հայք: Կողերուն վրայ երկրաբանական յեղաշրջումներու առաջ բերած հրաբխային սեւ քարերու ապալերկ զանգուածները սարսափելի երեւոյթ մը կուտան իրեն, որոնք կարծես աւելի պատկառելի կ'ընծայեն զինք դիտողին:

Ինչեր... տեսած է Մասիս: Նախապատմական դարերէ մինչեւ մեր օրերը ինչեր եկեր ու բաղխեր են հուրերով ու լաւաներով ծոցուր իր կողերուն եւ ետքաշուեր են իրենց ցասումի եւ վրէժի բովանդակ թափին ու լրումին մէջ:

Հայութեան ծով ծով ցաւերուն մականթացութեան եւ տեղատուութեան հանդիսատես Մասիսը յաւէտ կենդանի վկան պիտի մնայ Հայուն ցաւատանջ հոգիին:

Արարատի բուսականութեան գալով՝ անոր վրայ ճառել եւ խօսիլ մեր կարողութենէն վեր եւ միանգամայն մեր առաջադրած նիւթէն դուրս է: Սաչափ միայն կրնամ ըսել թէ Թուրնիֆոր՝ Ֆրանսացի հմուտ բուսաբանը երբ 1700ին ամբողջ Փոքր Ասիան կը շրջի եւ ափ մը հող իր հետաքնին ուշադրութենէն չի վրիպեցներ, Արարատ մտնելուն, անոր հարուստ բուսականութիւնը, ազգի ազգի եւ բազմասեռ ծաղիկները տեսնելով խիստ մեծ կ'ըլլայ իր հիացումը: Եւ այս

ամէնը անսպառ աղբիւր կը ծառայեն իր զննութեանց, իր ըրած գիւտերուն անվաւեր մասերուն վրայ մեծ լոյս սփռելով:

Եփրատն ու Տիգրիսը անմահական հոտ բուրոյ այս դրախտանման վայրերուն պարգեւները են, որոնք իրենց ծագումին մէջ վճիտ ու զուլալ՝ դղչացող առուակներ են եւ երթալով կը խորունկնան, կը մեծնան, կը պղտորին եւ քանի բուն Հայաստանի սահմաններէն հեռանան, այնքան մեծաղողոդ գոռումներ կը հանեն իրենց անդունդներէն: Յաւիտենական զանգատներու պէս, որ շղթայազերծ կը պոռթկան խլացուցիչ աղմուկներով եւ վերջ ի վերջոյ օտար հողերու վրայ ոգեսպառ հեւքով եւ փրփրոտ ֆշոցներով մէկ մէկու կը խառնուին եւ ծովու պէս կ'ընդարձակին:

Ճորոխը որ կարճ կեանք մը ունի Հայաստանի հիւսիսէն զիկզակ կ'ընթանայ դէպի հարաւ: Ի սկզբան կը թռի թէ հեծկտուքներու մէջ կը ծորի որ երթալով ուղի մը կը դառնայ եւ Պոնտոսի լեռներէն քովընտի Խաղտիքի քովն ի վեր, Պարխարեան լեռներու ուղղութեամբ կ'երթայ կը թափի եւ կանհետանայ Սեւ ծովու ջուրերուն մէջ:

Սակայն թոյլ տուէք ինձի, որ նորէն դառնամ Եփրատին, մասնատրաբար խօսելու համար իր ծագումին վրայ: Անոր որորանը ՊԵՆԷՆ է: Անպատմելի եւ սխրալի վայր մը ուր դալարն ու մարմանդը, առուն ու առուակը, ակն ու աղբիւրը, պէս պէս ծաղիկներն ու խնկաւէտ բոյսերը մէկ մէկու ընդելուզուած՝ ամենանուրբ կիտուածանկար մը կը յօրինեն ուր մշտա-

փթիթ զարուն մը հեշտօրոր զեփիւռի մը շունչով մարդուն առաջին անկումը կը հծծէ Մայիսէն մինչեւ Սեպտեմբեր:

Ասկէ շատ հեռի չէ Խնուսը, որուն յորդ արօտատեղիներէն անցնող ճամբորդին ձին կաներեւոյթանայ անոնց թաւ խոտերուն մէջ:

Հաւանաբար այս յուռթի արօտներուն վրայ կ'արածէին այն նժոյգները, որոնցմէ 20,000 հատ, ամէն տարի Հայաստան պարտաւորեցաւ Սասանեան իշխանութեան՝ երբ անոր գերիշխանութեան տակ Սատրպուլթին մը դարձաւ:

*
* *

Հայաստանի ցանուցիր ու բազմաթիւ ամրութեանց եւ դաստակերտներու մնացորդներուն վրայ մէկիկ մէկիկ խօսիլ շատ դժուար ու երկար պիտի ըլլար: Սակայն այդ պատճառ մը չէ որպէսզի անտես առնուին Հայ գոյութեան ամէնէն կարկառուն նշխարները անոնց մէջէն:

Անի ամրոցը որ Արշակունիներու փառապսակն է, միակտուր խիստ մեծ ժայռի մը մէջ փորուածք մըն է զարմանահրաշ, Եփրատի երկու ափերը իրարու հաղորդակցութեան դնող իր գետնուղիներով:

Ժայռին մէջ փորուած սենեակներ, ժայռին մէջ կոփուած սրահներ, ժայռին մէջ կերտուած զինարան, ժայռին մէջ բացուած շտեմարան, ժայռին մէջ ելնարան, ժայռին մէջ նրբուղի, ժայռին մէջ ապարան, ժայռին մէջ զնդան:

Կեանքի գոյութեան եւ մտքի ստեղծման այս հետքերը՝ իրենց քանակի եւ որակի ամբողջութեան մէջ՝ գրեթէ կանգուն կը մնան դեռ:

Այս ժայռ ամրութեան կեդրոնը դստիկոնաւոր աշտարակ* մը դեռ կանգուն կը մնայ, որ երբեմն ապաստանարան ծառայած է Տրդատի քրոջ Խոսրովադուխտին:

Այլ ափսոս, որ մեր ճամբորդութեան ատեն, հետաքրքրութիւննիս լիովի գոհացում չի գտաւ, երկար ատեն ամէն կողմ չի կրնալով պտտիլ ու դիտել:

1903ին ցնորամիտ կառավարութիւնը Արգոսեան աչքերով կը հսկէր այս հնութեանց վրայ կասկածոտ ու վարանամիտ, լրտեսներ ուրուականներու պէս կը թափառէին այս մենաւոր ու լռին վայրերուն մէջ, որովհետեւ մարդիկ երբ կը լռէին, քարերը իրաւունք չունէին աղաղակելու . . .

Ըսի՞նք թէ այս ամրոցը Դարանաղեաց գաւառին (այժմ Կամախ) մէջ է:

Այս բերդ դանգուածին ճիշտ դէմը կիյնայ Պապ թագաւորին գերեզմանը, զոր Տաճիկներ իւրացնելով ուխտատեղիի վերածեր են Ս. Եւ. Մ. Է. անունով:

Թողդան գիւղը, ուր մատուռին մէջ, մատուռին տաճարին տակը բացուող մատուռի մը մէջ յաւիտենապէս կը հանգչին Վրդանէսն ու Արիստակէս իրենց հօր Ս. Գրիգորի նշխարներուն քով, հազիւ 3 ժամ հեռաւորութիւն ունի այս ամրոցէն:

(*) Տաճիկներ Դրաւեչա Բէօշկի կ'անուանեն զայն:

Մօտ է նաեւ Սեպուհ լեռը, աննման Սեպուհը՝ որուն վրայ Յովհաննաս* Պրուզ Երզնկացիին սքանչելի շարական մը յօրինած է, որուն առաջին տողերն են «Լեւին՝ սօնայն՝ սյուր ցնծացէ՛ր՝ ընդ վե՛րայն՝ քա՛նքն՝ Սեպուհոյ գերազանց վերինն. ասնդ է նա՛ն բնակեցա՛ւ Սուրբն Գրեթորին՝ սեանն Լուսոյ Հայաստանեաց Ս. Եկեղեցոյ, որով ցնծայ ի քա՛նք վերինն Սեպուհն . . .»

Մասիսէն վերջը Սեպուհ Հայաստանի լեռներուն մէջ ամէնէն բարձրն է:

Աւանդութիւն մը կը պատմէ թէ, երբ Նոյի տապանը ջրհեղեղէն վերջ իր վրայ հանգչելու կուգայ, Սեպուհ անոր կ'ըսէ «գնա՛ ի Մասիս, որ բարձր է քան զիս»:

Այս տեղ օթեւան եղած է Ս. Գրիգորի, երբ ան Հայ ազգը Քրիստոնէութեան դարձնելէ վերջ, պահ մը խաղաղութեան պէքը զգալով, քաշուեցաւ անոր քարայրներուն մէջ՝ Մանեայ այրը միսմինակ իր Աստուծուն հետ, սիրտը մեծ իտէալներու յոյզերէն հանդարտած՝ հոգին վսեմ խռովքներէն անվրդով ու խաղաղ:

Սեպուհի մէկ բարձրավանդակին վրայ կառուցուած է վանք մը Լուսաւորչի անունով:

Այս նուիրական լեռան մէջ բացուող խորհրդաբոյր ձորի մը մէջ կայ նաեւ խիստ հին վանք մը, Աւագ վանք անունով, Ս. Թաթէոսի քրիստոնէութիւնը Հայոց մէջ քարոզելու ատենէն հիմնուած: Նախապէս

(*) Այս իմաստասէրին գերեզմանը կը գտնուի Երզնկայի Ս. Նշան եկեղեցիին մէջ:

կուտունն եղած է ան, որ յետոյ փոխուած է եկեղեցիի՝ Տեղ տեղ կը նշմարուին տակաւին մեհենական հետքերու մնացորնդեր:

Յիշատակութեան արժանի է նաեւ Բագրատունեաց հարստութեան մէկ նմոյշը, բերդ մը, Մմբատաբերդը, որ ձորոխի ձախ եզերքը լեռնակի մը վրայ դեռ կը կենայ իր միջնաբերդի գլխաւոր մասերովը: Այս թէեւ առաջինին ոչ տիտանեան երեւոյթը ունի, ոչ ալ անոր զարմանալի յօրինուածքը, բայց ունի վաղնջական դրոշմ մը, որ խորհրդածել կուտայ դիտողին եւ կը յուզէ:

* * *

Եկեղեցաց գաւառին (Երզնկա) վրայ խօսինք հիմա որ ընդարձակ հովիտ մըն է Սեպուհի արեւելեան կողմը, ընդարձակ երկայն սկաւառակաձեւ, ուր կան անհամար հնութիւններ, մեծ մասամբ կուտուններու հետքեր, որոց շատերուն վրայ կամ մօտը կառուցուած են յետոյ վանքերը:

Այս ձուածե հովիտը եզրող լեռներու կողերուն ու փեշերուն վրայ շուրջանակի բռնած են բոլոր մեհաստանները իրենց ազարակներով ու գիւղերով:

Ասոնց մէջ հաշուելու չէ խել մը կալուածներ եւ ազարակներ ալ, որոնք հետզհետէ Թուրք տիրապետութեան օրերէն թրքաբնակ գիւղերու վերածուած են: Այս վայրերուն աղաւաղեալ անունները՝ որ բնակիչներէն կը յորջորջուին չեն կրնար սքօղել սակայն Հայ

սեփականութեան ինքնութիւնին որ շատ որոշ երեւան կուգայ իրենց բառական ուղիղ կազմութեան մէջ:

Այսպէս Չախուան, Սբ. Կաթաղ. Սփնքոր, Վասկետ, Մաղաշուր խորթ ու կրճատուած ձեւեր են Չարխափանի, Ս. Կաթողիկէի, Ս. Գրիգորի, Վասակակերտի եւ Մեղրաշուրի:

Անման դիրքերու վրայ հովասուն վայրեր են ամէնքն ալ, որոնք զատ զատ հմայքներն ունին զիրենք յատկանշող: Եւ եթէ ոչ ամէնուն, գէթ պէտք է անպատճառ խօսիլ վերջինին վրայ:

Մեղրաշուրը իր մէջ յորդաբուխ ակ մը ունի, որուն ջուրը այնքան քաղցր է, որ կը թուի թէ մեղրի խորիսիւնէ մը կը սուզի:

Բոկոտն եւ անվարտի Քիւրտեր կը վայելեն այս ջուրը:

Այս գիւղերուն արօտն ու մարզը, որոց վրայ բուսնող խոտերը՝ ծոթրինի, մանուշակի, բալասանի, սապրի հոյզերովն եւ անոնց համովն ու հոտովը ակաղձուն են եւ օժուն, վերստին երեւան կուգան իրենց իսկութեամբ այս հովանոցներուն (եայլայ) մէջ պատրաստուած մածունին ու կոզիին մէջ, համեղ ու քաղցրահոտ:

*
* *

Կարնոյ նահանգին արեւմտեան հարաւակողմը Արածանիի մօտ Ծոփաց գաւառը (այժմ Խարբերդ), արգասաբեր դաշտ մըն է սխրալի պէսպիսութեամբ, բլուրներու շղթաներ, անջատ բլուրներ, դաշտակներ, փոքր

հովիտներ, պուրակներ, գետակներ, լիճեր, լճակներ գունազեղ գորգ մը կը յօրինեն ընդարձակ տարածութեան մը վրայ: Ծովք լիճը հայելի մըն է ակնախտիդ, որ այս նարօտագեղ դաշտին զարդն ու շուքն է, անոր բարձրագիւր մասերը իր մէջ ցոլացնող:

Ժամանակին Ամերիկացի միսիոնար մը, երբ առաջին անգամ ոտք կը դնէ այս դաշտին վրայ, բարձր տեղէ դիտելով եւ չափելով անոր համայնապատկերը, չիկրնար իր հիացումը զսպել եւ խանդավառուած կը ցատկէ երիվարէն գետին, տղու պէս վեր վար կը ցատկէ ուրախութենէն բացազանչելով «Միթէ՛. այս որ կը տեսնեմ իրակա՛ն է. . . թէ ոչ արուեստական. միթէ՛. բնութիւնը այսպէ՛ս ստեղծած է այս դաշտը եւ պարզեւած . . . »:

*
* *

Եկեղեաց գաւառին հիւսիսային կողմը, Եփրատի մէկ օժանդակին՝ Գայլ գետին երկու եզրերուն վրայ գրաւած իր հին շէնքերովը նշանաւոր է Երէզ աւանը:

Շատ մը զանազան տեսակ հնութիւններ (antique) կ'ելլեն ասկէ, ինչպէս արձաններ, թագեր, ծաղկամաններ, ամաններ, դրամներ, ոսկեղէն եւ արծաթեղէն մեհենական առարկաներ, թերափներ եւլն. եւլն.

Անահտի ոսկեճոյլ արձանը 1880ին այս տեղէն գտնուած է, որ այժմ Լոնտոնի հնութեանց թանգարանը կը գտնուի:

Եփրատի եւ Տիգրիսի հովիտին մէջ աճող ու զարգացող քաղաքակրթութեան մը կարկառուն ապա-

ցոյցները են ասոնք, որ յաւէտ հետաքրքրութեան եւ հիացումի առարկայ պիտի ըլլան Եւրոպացի գեղարուեստասէրներուն (amateur):

* * *

Եկեղեաց գաւառին արեւմտեան կողմը Ալիս գետին մօտ՝ Սեբաստիան բռներ է իր արգաւանդ դաշտագետիններովը եւ բազմաթիւ գիւղերովը, որոնց ի տես անցորդը կը յուզուի եւ ակամայ կերթայ կը յածի իր միտքը Թաթարական արշաւանքներու դժոխքմբեր տեսարաններուն եւ կը սոսկայ նշմարելով սեւ հողերուն վրայ 10 հազար Հայ զինւորներու ողջ ողջ թաղուիլը, Լէնկթէմուրի վրէժխնդրական ամենաքստմնելի մէկ նոպային մէջ յղացուած:

Արծրունիներու վերջին ապաստանարանը կ'ըլլայ այս վայրը, զոր ի գին եւ ի փոխարինութիւն Վասպուրականի, անոնք կստանան Յոյներէն:

Նշանաւոր է Սեբաստիոյ Ս. Նշան վանքը: Այդ վանքին մատռան ներքնամասը դեռ անեղծ կը մնայ, զոր Սենեքերիմ թագաւոր շինած է: Հոս պահուած են զանազան հնութիւններու հետ Սենեքերիմի թուրը:

Աշխարհ հովիտը՝ որ այս նահանգին գլխաւոր մասը կը կազմէ այնքան մեծ է եւ ընդարձակ, որ իրաւամբ արժանի է իր անուան: Տեղացիք կէս մը օտարացնելով Աշխարհ-Օշկ'անուանեն զայն:

* * *

Հայրենակիցներ, ինչ որ խօսեցայ Հայաստանի վրայ եւ ինչ որ դուք լսեցիք անոր մասին, իբր ամենափոքր մէկ նմոյշը ընդունելու էք մեր պաշտելի հայրենիքին, կամ Հայաստան կոչուող բուրաստանին պարզ մէկ փունջը, որ բնականօրէն պիտի բուրէ բոյրերուն ամենէն զգլխիչը եւ պիտի ցոլացնէ թոյրերուն ամենէն թովիչը, զի բնութեան անարուեստ երանգապնակէն հրաշալիօրէն կէտկիտուած է ան. թէեւ այժմ տկար ձեռքէ մը քաղուած ըլլայ եւ խառնիխուռն յօրինուած:

ՎԱՐԴԱՆԱՆՅ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Արսասանուած Ռոստոքոյի Ս. Թագաւոր եկեղեցիին մէջ)
21 Փետր. 1908

Բազում ձմերաց հալեցան սառնամանիք, եհաս գարուն եւ եկին նորեկ ծիծեռուներ, տեսին եւ խնդացին կենցաղաւէր մարդիկ. եւ նորա ոչ երբէք կարացին տեսանել զանցկալիսն իւրեանց:

Եղիշէ:

Մոռացան զկանացի տկարութիւն եւ եղին արիք առաքինիք ի հոգեւոր պատերազմին:

ՆՈՅՆ

6744.17

Շուրջ 1500 տարի առաջ՝ յաւէտ ողբալի Հայաստանի մէջ, Աւարայրի դաշտին վրայ, Տղմուտ գետին մօտերը մի վսեմ այլ խորհրդաւոր տեսարան կը պարզուէր: Որմիզտի երկրպագուները Աստուծոյ որդին դա-

ամնողներուն դէմ պայքար կը մղէին: Զրադաշտի հուրը լափել ու մարել կը նկրտէր Քրիստոնէութեան լոյսը, որուն ճառագայթները արդէն Հայ սրտերու մէջ խորապէս թափանցած, կռանած ու դարբնած էին հոն ամրապէս, բարոյական այնպիսի անյեղլի սկզբունքներ, ուրկէ հուրն ու սուրը ի զուր պիտի փորձէին արմատաքի խլել ու ջնջել զանոնք: Եւ զգացումի բռնաբարութեան այդ հրէշային ու բարբարոսային ճիգերը որքան ասաւոր Պարսիկներուն կողմէ, այնքան գերմարդկային էր ընդդիմութիւնը Հայերուն:

Երեւակայութեան սուր թռիչով մը, պահ մը հոն, հոն յառենք մեր հայացքը, այն գետինին վրայ, ուր այս տխուր ու սարսափելի անցքերը տեղի ունեցան, ու դիտենք դարերուն մէջէն:

Տաճարներու մէջ ծխացող անուշաբոյր խունկերը, որոց գուլաները ծուէն ծուէն անզայտանալով դէպի կամարները կը բարձրանային, տեսակ մը խորհրդաւորութիւն հիւսելով հաւատաւոր հայերու աղօթքի մը մոնջներուն հետ, հիմա փոխուած են սեփսե ծուխերու: Հրդեհը կը լափէ ամէն ինչ: Եկեղեցիները կը ծրխան ամէնքն ալ: Կամարներուն փեռեկուած լայնշի ծերպերէն դուրս կը պոռթկան լափլիզող բոցերը ճինճերահոտ: Տեղ տեղ՝ զուլումի այդ աշխարհին մէջ մոխրի կոյտերուն տակէն ընդհատ ընդհատ կայծեր կը բռնկին, խեղդուկ բողոքն է դա հայ շինականին անհետացած աճիւններուն:

Անդին՝ նեմրուտի, Կրզուռի, Քարքէյի, բարձունքներուն վրայ, բերդերուն մէջ ապաստանող ան-

պաշտպան կիներ ու աղջիկներ. անողոք թշնամին գերի կը վարէ: Խարազաններու շառաչիւնը անոնց պարտասած ու յոգնած մարմինին վրայ կապոյտ նշաններ կը ձգէ. եղկելի տեսարան:

Սակայն Հայ քաջերու ոգին սպառապաւու չէ կորսուած ու կը վերածնին ահա: Կը սուրան, կուգան, կը հասնին օղապարիկ ձիերու վրայ հեծած Հայ քաջեր: Հողմակոծ ամպերու եւ փոթորիկներու պէս կը թռին ու կը խմբուին Արածանիէն մինչեւ Տղմուտի ափերը: Սանձակոտոր ու փրփրերախ ձիերու ոտքի տոփիւնը հայ պատանիներու սիրտերը կը խանդավառեն: Ամէն կողմէ աղաղակներ կը բարձրանան. վրէժ, վրէժ . . .

Համախմբուած են հոն ծերեր ալ, պատանիներ, կիներ, մատաղատի աղջիկներ, փափկասուն տիկիներ: Ամէնքն ալ միեւնոյն վսեմ՝ նպատակին կը ձգտին, անվեհերութեամբ ստոյգ եւ անվրէպ մահուան կը դիմագրաւեն: Ամբողջ այս մարդկային կոյտը կը թնդայ, կը դղրդայ իր հրամանին առջեւ քաջարի զօրավարին՝ Վարդան Մամիկոնեանի, որ սուրը ձեռքին մէջ կ'առաջնորդէ զանոնք:

Ազգային գոյութեան եւ կրօնի նախանձայուզութեան այս բուռն պայքարը իր միահամուռ ջանքերուն մէջ պարապ չանցնիր եւ Հայերը բարոյական այնպիսի յաղթանակ մը կը տանին, որ ալ անկարելի կ'ըլլայ թշնամիին կրկին փորձ մ'ընել եւ որ կը համոզուի վերջապէս, թէ անկապտելի է Հայուն կրօնը եւ Ազգ. զգացումը:

*
* *

Որոշապէս կը հասկցուի, թէ նախնի Հայերը ինչ բուռն եւ սոսկալի զոհողութիւններով. քաղաքական փոթորիկներու մէջէն, արեան հեղեղներէն, նախճիրներու մէջէն, անվթար ու անեղծ, մեզի բերին ու հասուցին մեր եկեղեցին, մեր լեզուն եւ մեր գոյութիւնը: Սուրբ եւ նուիրական ամանդներ, որոնք դարերու մէջէն կը յիշեցնեն մեզի Հայուն փառքը եւ անոր հետ մէկտեղ կը խօսին անոր ցաւերուն, արցունքներուն, կրած կեղեքումներուն, սարսափներուն վրայ: Աւանդ սակայն, անոնք կը խօսին նաեւ, այդ պաշտելի ամանդները, հայ դաւաճանին, հայ մատնիչին վրայ:

Այո, Վասակ Մամիկոնեաններու մօտ՝ Վասակ Սիւնիներ, Պարգեւ Ամատունիներու, Թաթուլ Վանանդացիներու քով Մերութաններ, Յովսէփներու եւ Ղեւոնդներու քով Կիրակոսներ, ճակատագրօրէն կարծես սահմանուած են մէկտեղ ապրելու: Այս տխուր իրողութիւնը մեր Ազգին համար մեծ դժբաղտութիւն մը եղած է, ինչպէս հին ատենները, նմանապէս մեր օրերուն մէջ եւ կ'արժէ քիչ մը յուզել զայն, ախտաճանաչութիւն ունենալու համար, առանց անոր, քանի որ անհնար է բուժում ու դարման:

Նախանձն ու ատելութիւնը, որ խորշակի մը շունչին պէս զօսացուցեր է մեր մէջ ազգային նկարագիրը, ուղղակի հետեւանք է տգիտութեան եւ դաստիարակութեան պակասին: Ուրեմն ազգերու այս հսկայաքայլ յառաջդիմութեան մէջ եթէ տակաւին դանդաղինք եւ գէթ շարժում մը չընենք, մեր ազգին ապագան միշտ մռայլ ու ամպամած պիտի մնայ: Անհերքելի

ճշմարտութիւն մըն է, թէ ով որ չի յառաջդիմեր, ան ետ կը մնայ:

* * *

Ասանկ նուիրական օրուան մը մէջ, թոյլ տուէք խնդրեմ, որ ի դիմաց նոր սերունդին քանի մը թելադրութիւններ ընեմ:

Հայրեր ու մայրեր մենք ազատ չենք տակաւին, փրկուած չենք: Տակաւին մենք Հայերս տգիտութեան կապանքներուն մէջ խլրտած իսկ չենք ու միշտ պիտի մնանք այդպէս, եթէ մենք մեր կողմէն մեր վերքերուն դարմանը չգտնենք: Մեր փրկութիւնը, մեր ազատութիւնը մենք մեր մէջէն պիտի ծնինք:

Սահմանադրութեան յարուցած վլվուկներէն, ազատութեան սնոտի յոյսերէն, կանչ ու պողոտայներէն դարձուցէք ձեր ուշադրութիւնը ուղղակի ձեր զաւակներուն դաստիարակութեան մեծ ու փրկարար գործին: Նոր սերունդին մէջ խտացած է մեր ազգին յոյսերը, իղձերը, մէկ խօսքով մեր ազգին ապագան հոն ամփոփուած ու պահուած է, պրպլտենք, յուզենք ու վերհանենք զանոնք:

Հայրեր, ամէն օր, ամէն ժամ, ամէն րոպէ եթէ ձեր մտածութեան միակ առարկան ընէք ձեր զաւակներուն կրթութիւնը, քիչ է դարձեալ: Ահաւոր, այլ խիստ անաչառ է ապագային դատաստանը: Ձեր այսօրուան մէկ անփոյթ ընթացքը, վաղը խիստ ծանր պատասխանատուութեան տակ կրնայ ձգել ձեզ: Առանց ձեր աջակցութեան դպրոցները հրաշք չեն կրնար գոր-

ծել: Տունը օժանդակն է դպրոցին, առանց անոր, դպրոցին ըրածը պիտի մնայ միշտ միակողմանի եւ թերի, չըսելու համար ոչինչ:

Մեր մէջ առ հասառակ կրթութիւնը սխալ հասկըցուած է, կը կարծենք թէ տղուն քանի մը բառ կապկել տալով, թուաբանական հաշիւ մը սորվեցնելով մեր պարտքը կատարած լմնցած կ'ըլլանք: Ահա ասկէ կ'սկսի վիժումը եւ մեր հայ վարժարանները՝ քիչ բացառութեամբ, նախանձելի եւ կանոնաւոր վիճակէ մը հեռու են միշտ:

Կրթել, դաստիարակել ըսելով, կը հասկնանք բարոյական մարդը պատրաստել տղուն մէջ եւ նկարագիրը կազմել որ կարենայ ընկերութեան մէջ ապրիլ իբր կատարեալ մարդ, պարկեշտ քաղաքացի եւ ճշմարիտ Հայ:

Իսկ դուք, մայրեր, նուազ պարտականութիւններ չունիք հանդէպ ձեր զաւակներուն, մանաւանդ աղջիկներուն: Ապազայ մայրերը ձեզմէ կը ծնին եւ ձեզմով պէտք է պատրաստուին: Հոս անմիջապէս պիտի աւելցնեմ, թէ այրերէն աւելի պատասխանատուութեան տակ կը գտնուին կիները, զաւակներու դաստիարակութեան գործին մէջ:

Մայրեր, եթէ իսկապէս ըմբռնէք Ձեր կոչումը, պիտի տեսնէք որ Ձեր գործը աւելի վսեմ է եւ աւելի ստեղծագործող, որովհետեւ մանչ մը կրթելը մարդ մը կրթել է, իսկ աղջիկ մը կրթելը ազգ մը կրթել է:

ՀԱՅՈՒՆ ՑՍԻԸ ԵՒ ԴԱՐՄԱՆԸ

(Խօսուած (*) Քիսապի Հայ եկեղեցիին մեջ)
15 Նոյ. 1909

Կիլիկեան մեծ եղեռնէն եւ ահաւոր ջարդէն վերապրող Քեսապցիներդ՝ որսորդներէ հալածական եւ իրենց բոյնը կորսնցնող թուչուններուն պէս լեռնէ լեռ մոլոր եւ ծովէ ծով թափառայած՝ եկաք վերջապէս կառչելու եւ վերստին ապրելու այս ապաւերկ ժայռերուն վրայ հայ կեանքը, որ դժբաղդաբար եղած է միշտ եւ ամէն տեղ, դժնդակ, դառն եւ դժոխային:

Հայութեան ամպամած հորիզոններէն միշտ անպակաս եղող քաղաքական փոթորիկներն ու շանթերը բներեւոյթներու պէս իրենց պարբերական շրջանները բոլորելէ վերջ՝ այս անգամ ալ իրենց գոյութիւնը երեւան բերին այս մոռցուած ու խուլ վայրին մէջ, որպէս զի հայ տառապանքը եւ անոր մեծութիւնը դուք ալ զգայիք հաւասար չափով:

Մերինին պէս թմրած ազգի մը ամէն մէկ հատուածը, ամէն մէկ անհատը անպատճառ նոյն բազմաչարչար կեանքը ապրելու էր, զգալու համար իր եւ իր ցեղին վիշտերուն անսահման խորութիւնը, թերեւս անոր

(*) Տեղական Հայ բարբառին Թարգմանեց Տիար Աւետիս Ինճէճիկեան՝ Ուսնդ. Պէրութ, Բժշկ. Համալսարանին:

դարմանն ալ հաւաքական իրերօգնութեամբ գտնելու հնարաւորութիւնը այդ կը պահանջէր:

Մեր ազգին ցիր ու ցան զաւակները՝ միեւնոյն արհաւիրակից զալարումներուն մէջ նոյնանալով պիտի կարենային եղբայրանալ անխտիր, ինչ դաւանանքի կամ յարանուանութեան ալ պատկանէին անոնք:

Երկու վշտահար սրտերու մտերմութիւնն ալ ճիշդ այս եղանակով կ'սկսի: Միեւնոյն զգացումով համակուած սրտերը տեսակ մը ձգողութիւն կ'ունենան իրարու հանդէպ, ուրկէ կը ծնի այլասիրութեան զգացումը:

Մենք որ առանց սթափելու, առանց տխուր իրողութեանց պատճառները քննելու եւ զալիք նորանոր աղէտներու առջեւ թումբ կանգնելու, առօրեայ խաղաղութեան մը եւ հանգստաւէտ կեանքի մը պատրանքներուն տակ, խարխափելով ժամանակ վատնելու վարժուած ենք լոկ, հարկ էր միահաղոյն եւ սարսափելի ցնցումի մը զօրեղ տպաւորութիւնները կրել մեր ջիղերուն վրայ, որպէս զի արթնայինք:

Կը զգամ որ Դուք եւս՝ Ձեր կարգին այս աւերներուն վրայ Ձեր անփոխարինելի կորուստներուն վրայ կողբաք եւ իրաւունք ունիք. զի կսկիծները մէկէ աւելի են եւ բազմազան: Հոն կայ կսկիծ մահու, կսկիծ մեծամեծ կորուստներու եւ ամէն տեսակ սարսափներու:

Այնպիսի աղէտներ մեզ կարելի էր խոցեցին, որոնք պիտի սպիանան միայն ժամանակի հոլովումով, սակայն պայմանաւ որ այդ ժամանակի արժէքը եւ զայն պատշաճօրէն գործածելու զաղտնիքը զիտնանք ամէնքս ալ: Քանի որ կ'ապրինք, աշխատելու ենք եւ մեր

այս օրուան պէտքերուն համար աշխատելէ զատ, վաղուան պէտքերուն հոգը ունենալու ենք: Մեր զաւակները մեզմէ հաց կը պահանջեն, սակայն չկարծենք թէ իրենց տրետուրը հոգալովնիս ամէն բան աւարտած կ'ըլլայ եւ մեր խիղճը հանդարտ:

Նիւթական թէ բարոյական դեռ ուրիշ այնպիսի պէտքեր կան որոց համար մեր աշխատութիւնները կրկնապատկելէ զատ, ի հարկին միջոցներ ու հնարքներ փնտոելու ենք այդ պէտքերուն հասնելու համար:

Անցեալին տխուր փորձառութիւնը մեկնակէտ առնելով անկէ ճամբայ ելլելու ենք, խոհեմութեամբ եւ մտադիր հոգածութեամբ վարելով մեր ներկան, որպէս զի ապագան՝ որ խիստ անողոք եւ անաչառ է, դատախազ չկանգնի մեզի, ոչ ալ մեր ետեւէն զալող սերունդը, որոց աչքերը այս արհաւիրքներուն մէջ բացուեցան, որոնք մեր տառապանքներու բաժակէն կշտապինդ ըմպեցին իրենց մանկութեան բնական եղող խօլ ու զուարթ բնաւորութեան հետ խառնելու համար վաղահաս լրջութիւն մը մաղձային ու մոայլ:

*
* *

Ձեր թալանուած կամ աւարի մատնուած ինչքերը վերստին ձեռք բերելու յուսով կը տեսնեմ որ բաւական ժամավաճառ կ'ըլլաք, անգիտակցաբար կրկնապատկելով ձեր նիւթական կորուստները, միեւնոյն ժամանակ բարոյական մեծամեծ կորուստներու դուռ բանալով:

Այս վարմունքով կը նմանինք այն ճամբորդին, որ կորսնցնելով իր մէկ ինչքը կամ առարկան, կը կենայ կէս ճամբուն վրայ, մինչ իր ուղեկիցները կը շարունակեն ճամբանին:

Ան կը դեզերի այս ու այն կողմ, եւ մտածութեանց մէջ խորասուզուած իր փնտռտուքը կ'ընէ, մերթ յուսահատելով իր կորուստը կողբայ ձեռքերը ծունգերուն զարնելով, մերթ իր կորուստին մեծութեան առջեւ ասհարկ եւ սրտատրոփ յուզումներէ խելայեղ, կը նստի գլուխը թեւերուն մէջ մտածկոտ եւ վարանամիտ:

Այսպէս կ'անցնին օրերը մէկմէկու ետեւէ: Իր ուղեկիցները հեռու երկիրներու մէջ իրենց գործերը կարգադրած եւ վաստակին զրպանած կը վերադառնան ուրախ, նոյն ճամբուն վրայ հանդիպելով մարդուն, որ տակաւին շփոթ ու յուսահատ իր կորուստը կողբայ:

Ձեզմէ շատերուն ընթացքը այս մարդուն ընթացքէն բնաւ տարբերութիւն չունի:

*
* *

Ըսել չեմ ուզեր թէ մարդ իր կորուստը ձեռք բերելու համար ո՛ր եւ է ջանք ընելու չէ, այլ կորուստի մը ետեւէ ըլլալով մեծ ու անդարմանելի կորուստներ առաջ բերելու չէ:

Ենթադրենք թէ ես իմ այս գլխարկս կամ այս ժամացոյցս կորսնցուցի, անշուշտ հարկ է որ փնտրուեմ զայն, գտնելու համար, բայց միթէ՞ խելք է, որ թողում ամէն գործ ժամանակի կորուստ ունենամ անոր

համար երբ քիչ ժամանակի մէջ եւ քիչ ջանքերով կարելի է ունենալ ճիշտ ատոնց նմանները գիներնին վճարելով: Մինչ նոյն առարկաները գտնելու յուսով ժամանակի կորուստ կ'ունենամ եւ այսպէսով կրկնապատիկ սուղ վճարած կ'ըլլամ զանոնք:

Մեր ժամանակին մեծագոյն մասը, յատկացնելու ենք ազգովին այն միակ յենակէտին, որ զմեզ կանգուն բռնելու համար փոփոխակի պէտք ունի մեր օժանդակութեանը: Ուժ տալու ենք անոր, անկէ ուժ ու զօրութիւն ստանալու համար: Ինչպէս սիրտը մեր գործարանական մարմինին համար, անանկ ալ դպրոցը մեր ցեղին գոյութեան կենսանորոգ ուժի կեդրոնն է, ուրկէ արգասաւորիչ տարրեր կը բաշխուին ցեղին ունճացումը մշտնջենաւորելու:

Ազգերու քաղաքակրթութեան եւ բոլոր յառաջդիմութիւններու գլխաւոր պայմանները երեք են, առաջինը ուսում, երկրորդը ուսում եւ երրորդը ուսում:

Ուրեմն դպրոցը քաղաքակրթութեան հիմնաքարն ու խարխսին է:

*
* *

Կուզե՞ս որ տղադ բարեկիրթ ըլլայ, դպրոց դրկէ: Կուզե՞ս որ տղադ գիտուն ըլլայ, դպրոց դրկէ: Կուզե՞ս որ տղադ թշուառ չըլլայ, դպրոց դրկէ: Կուզե՞ս որ տղադ պարտաճանաչ մէկը ըլլայ, դպրոց դրկէ: Կուզե՞ս վերջապէս որ տղադ մարդ ըլլայ, դպրոց դրկէ..

Արդեօք այսքան մեկին եւ անհերքելի ճշմարտութեանց առջեւ դանդաղիլը յիմարութիւններու մեծը չէ՞:

է՛հ ուրեմն, թոթափեցէք ձեր վրայէն, այս թու-
լուծիւնը եւ գլուխ հանեցէք վարժարանին շէնքը, ուր
պիտի դարբնուի ձեր զաւակներուն միտքն ու հոգին,
ուրկէ պիտի բողբոջի ապագայ սերունդը:

Կ'աղաչեմ խնայեցէք դուք ձեզի եւ վախցէք այս
փոքրերէն, որոց այսօրուան ամեղունակ աչքերը վաղը
շանթեր պիտի արձակէ ձեր վրայ իբր դատապարտու-
թիւնը ձեր գործած ահռելի պարտազանցութեան: Եւ
եթէ չի գտնէ զձեզ այս աշխարհի մէջ, անէծքներ պիտի
թափէ ձեր գերեզմաններուն վրայ, որպէս զի հոն հան-
գիստ չըլլան ձեր ոսկորները: Ասի արդար վրէժխըն-
դրութիւն մըն է, անքաւելի անարդարութեան մը փո-
խարէն:

Տեսէք ամէն կողմէ օգնութեան ձեռք կը կարկա-
ռեն ձեզի՝ ձեր զաւակներուն սիրուն համար: Միթէ
դուք եւս ձեր հարազատներուն համար նոյն զգացումը
տածելու չէ՞ք ձեր կարողութեան չափովը:

Օն, շաժեցէք քիչ մը, շարժումը կեանք է, ան-
շարժութիւնը մահ: Զեր բոլոր ուժովը օժանդակեցէք
այն ամէն անոնց, որոնք ձեր զաւակաց համար կը
խորհին ու կը գործեն անդադար:

ՍՍ. Հ Ա. Կ ՄԵՍՐՈՊԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Խօսուած Քեսապի Միաց. ի վարժարանին մէջ)
30 Յունիս 1911

Ի Ներկայութեան ուսուցիչներու, վարժուհիներու, քոլեճական ուսա-
նողներու եւ ժողովրդեան:

Ոսկեդարու Հայ գրականութեան Բանթնին երկու
կրանիթէ սիւները կը կազմեն Սահակն ու Մեսրոպը,
որ Ե. դարուն մէջ երկու լուսաշող աստղերու պէս՝
յանկարծ կը փայլին Հայ գրականութեան մութ հորի-
զոնները լուսաւորելու համար:

Սյս երկու Աստուածափառ դէմքերը ճակատագրային
մեծ դեր մը ունեցած են հանուր Հայութեան համար:
Եւ անոնք հետզհետէ աւելի պատկառելի ու պաշտելի
կը դառնան դարերու հոլովումին հետ, քանի ազգային
գիտակցութիւնը կ'արծարծի մեր մէջ:

— Ի՞նչ ըրին Սահակն ու Մեսրոպը, — Անոնք
Հայ տառերը գտան — խուզարկու եւ գիտնական մըտ-
քեր, ոչ աւելի, ոչ պակաս:

— Ի՞նչ ըրին Սահակն ու Մեսրոպ — Անոնք մեր
եկեղեցիին ժամերգութիւնը եւ շարականը ճոխացուցին
— Աստուածարեալ եւ միստիկ հոգիներ, ոչ աւելի ոչ
պակաս:

— Ի՞նչ ըրին Սահակն ու Մեսրոպ — Անոնք
իրենց գիտով Հայ գոյութիւնը ապահովեցին կամ Ե-

րաշխաւորեցին զայն մշտենջենապէս: Ահա անոնց կատարած դերը, իսկապէս ստեղծագործող:

Իրենցմէ առաջ, մեր եկեղեցական պաշտամունք օտար լեզուաւ էին, դիւանական եւ պաշտօնական յարաբերութիւնք օտար, գրականութիւնը օտար՝ գիրքերը օտար՝ ամէնքն ալ օտար ու խորթ էին:

Եւ Ասորերէն, Յունարէն եւ Պարսկերէն լեզուները՝ ուրկէ մեր հոգեկան ու բարոյական սնունդը կ'ստանայինք, լիովին տիրապետելով մեր զգացումներուն, հետզհետէ ազգային ոգին եւ ինքնաճանաչութիւնը կը չքացնէին մեր մէջ:

Հոգեվարքի վիճակ մը, որուն անմիջապէս պիտի յաջորդէր մահը անխուսափելիօրէն, եթէ սակայն այդ երկու անմահները իրենց մոգական ձեռքերովը չի վերցնէին տախտապարուած այն մեծ մարմինը, որ քիչ յետոյ քայքայուելու եւ անհետանալու սահմանուած էր:

Անոնք անոր ներշնչեցին իրենց հուր հոգիէն հարազատ զգացումներ եւ ազգային շունչ եւ վերակենդանացուցին զայն:

Ի՞նչ մեծ ճիգերով կարող եղան գտնել Հայ տառերը կամ ի՞նչպէս առաջ տարին ազգին վերականգնումի այս մեծ ու փրկարար գործը. ատիկայ այսօրուան մեր նիւթը չի պիտի կազմէ, քանի որ ուրիշ պատեհութեամբ անոր պատմականը եղած է մի առ մի, որուն չպիտի անդրադառնամ, տաղտուկ չպատճառելու համար:

Միայն գիտնալ հարկ է, թէ այսքան զոհողութիւններու փոխարէն, մենք կրցե՞ր ենք իրականացնել

ամբողջովին անոնց միակ իղձը, Ազգ. թանկագին աւանդութեանց անվթար ու անեղծ պահպանման միակ փափաքը, որ ամէնուս ալ ըղձանքը ըլլալու էր հաւասարապէս:

Այս հարցումին պատասխանը դժբաղդաբար ժըխտական պիտի ըլլայ, երբ իրերը քննենք իրենց իսկութեան մէջ:

Ոչ... ապերախտ եղած ենք մենք:

Մենք Հայերս՝ մասնաւորապէս Կիլիկեցի Հայերս քիչ բացառութեամբ, մեր ազգային գոյութիւնը ուրանալու չափ ապերախտ գտնուած ենք, անտարբեր ու մանաւանդ խիստ պաղ վերաբերում մ'ունենալով մայր(*) լեզուին հանդէպ, որ հիմը կը կազմէ բոլոր բնատոհմիկ զգացումներուն եւ ցեղային յատկանիշերու, որոնցմէ զուրկ եղող Ազգ մը, ազգ կոչուելու իրաւունքէն կը կորզէ ինքզինք:

* * *

Որքան դատապարտելի է մեր ընթացքը, երբ այսօր. հակառակ ճոխ լեզուի մը գանձերուն տիրացած ըլլալնուս, օտարամոլութեան խտնէն վարակուած, կ'աղօթենք թուրք, լեզուաւ. կը գրենք թուրք. եւ կը խօսինք թուրքերէն:

Արդեօք կզգամք, եթէ այս ընթացքով ի՞նչ անդունդներու կ'առաջնորդէք նոր սերունդը: Խորհեցէք քիչ մը եւ պիտի սարսափիք:

(*) Հայերէն լեզուի յմաստով գործածուած:

ի՞նչ ամօթալի բան, որ հայր մը իր զավկին հետ, եղբայրը իր եղբօր հետ, մայրը իր աղջկան հետ բարբառէ Թուրք լեզուաւ եւ այն ընտանեկան սուրբ յարկին տակ:

Աւելի քստմնելին կայ: Տղան իբր սիրոյ պտուղ, երկու ամուսիններու Թուրք բառբառներուն մէջ սաղմնաւորելով, իր առաջին բառը, որ ծնելէն յետոյ կ'արտաբերէ, «...» բառը կ'ըլլայ:

Արդի սերունդը ալ ավելի դատապարտելի է մայրենի (Հայ.) լեզուի հանդէպ ունեցած իր պաղ վերաբերումին համար, երբ ինկատի առնենք որ առհասարակ անոնք դպրոցական ընթացք մը բոլորած ըլլալով մէկտեղ, դատապարտելի օտարասիրութեամբ կարծես արհամարանք կը տածեն ինչ որ Հայութեան դրոշմ կը կրէ: Արդեօք այդ պատճառաւ է որ շատ մը Հայերու հաճելի կը թուի իրենց առջինեկ զաւակները կանչելու քերիտա, Ժողէֆ, Ալպեր, Խաթուն, Մուսա, Եուսուֆ, Ավրամ անուններով: Այս օտար յորջորջումները անշուշտ չեն տարբերիր Օսման, Հասան, Հիւսէին, Էսմա անուններէն:

Այս տխուր իրողութիւնները հեռուները կը տանին մեզ եւ ակամայ խորհրդածել կուտան . . . :

*
* *

Կիլիկիոյ զանազան վայրերուն մէջ գտնուող օտար կրթական հաստատութիւնները, որոնք այնքան ջերմ ասպնջականութիւն ցոյց կուտան մեր զաւակներուն,



ՄԻՍ ԶԷՄՊՐՍ

որոշ չափով մը պատճառ չե՞ն եղած մեր ազգային նկարագրին խորթացումին:

Հաստատութիւնը օտար, հաստատութեան վարիչները օտար, պաշտօնական լեզունը օտար, միթէ հնամր է որ հոն դաստիարակուող տղան չօտարանայ իր զգացումներով:

Եւ միթէ կարժէ՞ քանի մը գիտութիւններու եւ լեզուներու սիրուն համար մոռնալ կամ նոյն իսկ ուրանալ մեր ազգային թանկագին ասանդները, որոնց էն վերի կողմը կը կենայ լեզուն:

Կարծես տան ու դպրոցին մէջ դաւադիր դաշնակցութիւն մը կայ, որով մայրը օրորօցի մօտ, սուցիչը զրասեղանին քով մասնաւոր ջանք մը ունին տղուն ներշնչելու օտար զգացումներ, օտար բարբառներ եւ օտար սովորութիւններ:

*
* *

Այդ հաստատութիւններուն մէջ բացառութիւնները շողարձակ եւ պարբերական գիսաւորներու կը նմանին, այնքան քիչ են անոնք:

Յիրաւի ռւր, եւ երբ անգամ մըն ալ պիտի գտնենք Մ. Ալէնը եւ իր պէսերը որոնք նոյնացան Հայ ցաւերուն հետ եւ Հայ զգացումներով տոգորուած՝ ամբողջ կեանքերնին սպաս դրին անոր բազմախոց վերքերուն դարմանին համար:

Մ. Ալէն անդարձ կերպով հեռացաւ մեզմէ եւ Ռվ գիտէ անգամ մըն ալ ե՞րբ եւ Ռրպիսի աստղի տակ

անոր հոգիին ցուքը պիտի գայ լուսաւորելու աւերակ
Հայաստանի միջին մէկ խորշը :

Ո՛ր պիտի գտնենք նաեւ Միսս. Չէմպըրս, որ
թոթափելով իր ոտքի փոշին կը հեռանայ մեզմէ,*
որ նոյն եւ նման զգացումներով վառուած, քիչ կեանք
չսպառեց խեղճ Հայութեան ցաւերը մեղմելու համար,
մասնաւորաբար այս վերջին երկու տարին Քէսապի
ընդհանուր Հայութեան նախախնամութիւնը դառնալով :

* *
* *

Ասանկ նուիրական օրուան մը մէջ, այս մէջ
բերուած անուններով անշուշտ նպատակ չունիմ օր-
ուան բարձր նշանակութիւնը նսեմացնել, բաղդատու-
թեան եզր կամ զուգակշիռ առնելով զանոնք այն հըս-
կաններուն՝ Սահակի եւ Մեսրոպի հետ, որոնք մեր բո-
վանդակ երախտագիտութիւնը գրաւած, տեղ չեն թո-
ղուցած մեր սրտերուն՝ մէջ ուրիշներու համար :

Սակայն լոկ յարգանքի պարտականութիւն թող
նկատուի մեր համակրական արտայայտութիւնները ի-
րենց կրօնական լայն ըմբռնումներուն համար. որով
տողորուած, զործեցին յօգուտ Հայութեան

Դառնանք բուն մեր նիւթին հիմա :

* *
* *

Ոսկեղարու գրականութիւնը այնպիսի համաստե-
ղութիւն մը բերած է Հայ երկինքի վրայ, որուն չը
դառնալ ատեն ատեն ու չգննել անոր բովանդակու-
թեան մէջ մեր ազգին գոյութեան լուսասփիւռ ցուքերը,
զգացումէ զօսացած, մտքով ու աչքով կոյր ըլլալ պի-
տի նշանակէր բացարձակապէս ամէն Հայու համար :

Ուրեմն, յառենք մեր աչքերը այդ համաստեղու-
թեան, որուն կեղրոնը իբր հաստատուն աստղ կը կե-
նան Սահակն ու Մեսրոպ, որոց շուրջ իբր ծիր շըր-
ջան կ'ընեն ոսկեղարու մատենագիրները :

Ոսկի տառերով թո՛ղ քանդակուին մեր ամենուս
սրտին մէջ իրենց պաշտելի անունները եւ սերունդէ
սերունդ թո՛ղ Հայը փառքով ու պարծանքով յիշատակէ
անոնց տօնը :

(*) Նոյն ժամանակ Միսս Չէմպըրս կը պատրաստուէր Ամերիկա

Հ Ո Ւ Ս Կ Բ Ա Ն Ք

(*Խօսուած Քեսապի Միաց. Լճկ. Վրժրնց. անդրակիկ երկս. ընթացաւարակերուն՝ 24 Յունիս 1912*)

Տղանքս եւ աղջիկներս

Այս պահուն՝ ուր կը թողուք այս կրթական յարկը, իբր վերջին պարտականութիւն քանի մը խօսք ունիմ ձեզի: Ըսելիքս իր գլխաւոր կէտերուն մէջ գրեթէ հաւասարապէս կը յարմարի երկու սեռերուդ ալ: Ուրեմն մտիկ ըրէք ամէնքդ ալ:

Եթէ ձեր տարիքին միջինը 15 հաշուենք, պիտի տեսնենք որ ձեր ապրելիք կեանքին գրեթէ $\frac{1}{4}$ ին կամ առաւելն $\frac{1}{5}$ ին չափ ապրած կ'ըլլաք: Արդ ի՞նչպէս ապրեցաք ձեր կեանքի առաջին շրջանը կամ թէ ի՞նչպէս անցան անոնք: Ահա իմ նիւթիս բուն մեկնակէտը ուրկէ պիտի տանիմ ձեզ ձեր ապրելիք կեանքը:

Ձեր կեանքի այս շրջանը նախապէս ապրած ըլլալու իրաւունքովս, առանց փափկանկատ ըլլալու, պիտի ըսեմ թէ անփոյթ, անհոգ, եւ անգիտակից կեանք մը ապրեցաք:

Ու երբ այս բացորոշ ճշմարտութիւնը երեւան կը բերեմ, չի կարծէք թէ դատապարտելու նպատակ ունիմ ձեզ, քանի որ բնական պատճառներու հետեւանքը կ'ընդունիմ այդ կեանքը: Վասն զի մէկ կողմէ ձեր

ծնողաց նիւթական խնամքներուն, միւս կողմէ ձեր դաստիարակներուն բարոյական հոգածութիւններուն վստահ եւ աներկմիտ սրտով կրթնած՝ այլապէս չէիք կրնար ապրիլ ձեր կեանքին այդ առաջին շրջանը, երբ թէ տունը եւ թէ դպրոցը հաւասար զուգուրանքով եւ գրկաբաց կ'ընդունէին ձեզ բոլոր զոհողութիւններու գնովը:

Բնութեան մէջ եւս, սոյն ճշմարտութեան փաստ ծառայող մէկէ աւելի երեւոյթներ ուժ կուտան մեր այս կերպ խորհելուն:

Օրինակը թոչուններէն առնենք: Տատրակները իրենց ընտանի կեանքին մէջ չունին պայքար եւ ապրելու սրտմաշուքը: Անոնք երբ իրենց թառերուն վրայ կ'արթննան ամէն առաւօտ, կը լսեն տանտիկնոջ դաշն ձայնը, որ իր «—» «—»ներով կը կանչէ զանոնք տարտոյնելու համար իր գոգնոցին մէջ պահած կուտնու կուրեակը անոնց թառերուն տակ: Այն ատեն անոնք կը թրվուան, կուգան, կը հաւաքուին անոր շուրջը կըտոցահարելու համար իրենց սահմանուած հունտիկները: Ահա այսքան սահման ունի իրենց կեանքի գործունէութիւնը, ուրկէ անդին կը դադրի ամէն շարժում:

Տարդ ձեր կեանքը չէր տարբերեր այս կեանքէն, նիւթական թէ բարոյական առումներովը, ու կեանքը իր բոլոր փուլերուն մէջ վարդագոյն անցաւ: Ձեր զըլխուն վերեւ երկինքը անամպ եւ հեռու հորիզոններուն վրայ սաւառնող ճերմակ ամպերն ալ՝ երջանկութեան խորհրդապատկերներու պէս թուեցան ձեր երեւակայութեանը:

Եթէ երբեմն, սեւաթոյր բիծեր ալ նշմարեցիք այդ անհունութիւններուն մէջ, անոնք ալ մանկան ծիծաղին յաջորդող շիթ մը արցունքին պէս անգայտացան, տեղի տալու համար ձեր մատաղատի շրջանին արդար սեփականութիւնը եղող խնծիղներուն:

Ձեր անհոգ եւ անզիտակից կեանքին գիտակից կեանքը պիտի յաջորդէ, ուրկէ վերջ դերերը պիտի փոխուին եւ պիտի տեսնէք որ վարդերը փուշ ունին, երկինքը ամպ եւ կեանքը վիշտ ու տառապանք:

Թերեւս ձեզմէ մէկ քանիններուն համար այս շորջանը քիչ մըն ալ երկարի, բարձրագոյն վարժարանի մը ընթացքը շարունակելու մտադրութիւնովը: Բայց քանի որ ձեզմէ շատեր նոյն բաղդաւորութիւնը չի պիտի ունենան, այս վերջիններուն համար անմիջապէս պիտի սկսի կեանքի պայքարը, որ կը պահանջէ ինքնավստահութիւն, կորով եւ աշխատանք:

Ամենէն կարճ ճամբան ընտրելու համար ուղիղ ճամբան կը գտնեն. կեանքի մէջ ալ յաջողելու համար կարճ ճամբայ մը կայ, այդ ուղիղ ընթացք ունենալն է: Ուղղամտութիւնը այնպիսի զրահ մըն է, որով զինուած մարդը կրկնապէս ուժեղ կզգայ ինքզինք:

Այս ճշմարտութեան կարգ անցած ասութիւնը ուրախ եմ որ աղէկ տպաւորուած է ձեր մտքին մէջ, ձեզմէ մէկն ալ իր արտասանած ճառին մէջ յիշեց:

Ձեր մինչեւ հիմա կարդացածներէն լսածներէն եւ սովորածներէն բաւական բան արտաբերեցիք վերյուշումով, պատշաճեցնելով զանոնք ձեր ընտրած նիւթերուն: Սակայն բաւական չէ ատիկա. խօսիլը այլ է,



S. ՊՕՂՈՍ ՔԶԵՅ. ԱԹԻԿԵԱՆ

գործելը այլ: Ձեր ապրած կեանքը եթէ ուղիղ համեմատի ձեր արտայայտած գաղափարներուն, այն ատեն արժէք պիտի ունենան ձեր ըսածները, զի առանց այդ պայմանին ձայնախօս գործիին դերը կատարած պիտի ըլլաք լոկ, որ ոչինչ կը հասկնայ իր քլաթի թրթռացող ձայներէն ու խազերէն, եւ զայն լարող ձեռքը եթէ դադրի շարժելէ, ան եւս կը դադրի կ'ըլլայ համրանխօս եւ անգործ:

*
* * *

Ուսման նախատարերքը ստացաք այս նախակրթարանին մէջ, որ բոլոր կատարելագործելի ուսմանց հիմը կը կազմէ, որուն վրայ պիտի կառուցանէք Ձեր մտքի զարգացման բովանդակ շէնքը՝ Ձեր իսկ ջանքերով: Երբէք չըսէք թէ մենք սորվեցանք, մենք լմնցուցինք: Այսպէս խօսողը, այսպէս խորհողը անպատճառ պիտի յետադիմէ:

Ուսումը եւ գիտութիւնը անյատակ ծով մըն է կամ ովկիանոս մը՝ որուն սահմանը գծել կամ գտնել կարելի չէ, եթէ նոյն իսկ մարդ հարիւր տարի անընդհատ հետեւի անոր:

Մանաւանդ վայ անոր որ համեստութիւն չունի եւ իր կարողութեան վրայ անսահման վստահութիւն ունի: Ապահովաբար այնպիսին յառաջդիմելու տեղ պիտի յետադիմէ:

Համեստութիւնը, յարատեւութիւնը, կորովն եւ ինքօզնութիւնը Ձեր նշանաբանը ըրէք եւ վստահ քայլերով անցէք առաջ: Միշտ ապագային յառեցէք ձեր աչքերը առանց ետեւ նայելու եւ տնտնալու:

Արհամարհել գիտցէք՝ Ձեր ճամբուն վրայ արգելքներ յարուցանող նախանձուտը, որ կը դաւէ եւ չարիքներ կը նիւթէ մանաւանդ այն ատեն, երբ վհատութիւն եւ տկարութիւն կը նշմարէ Ձեր վրայ:

*
* *

Մարդ շատ մը իրաւունքներու հետ երջանիկ ապրելու իրաւունքն ալ ունի այս աշխարհին մէջ, բայց ի զուր կը ձգտի մարդ անոր, զի բացարձակ երջանկութիւն չկայ:

Տառապիլը կեանքի անյեղլի պայմանն է, հետեւաբար երջանկութիւնը խիստ անձուկ սահման ունի եւ ան կը կայանայ նուազ տառապելուն մէջ:

Նուազ տառապելու համար ալ երկու բան կարելոր է յիշել եւ հետեւել:

Սիրեցէք Ձեր ծնողքը, ձեր բարերարները, Ձեզի համակրողները, սիրեցէք ձեր նմանները առ հասարակ եւ սիրեցէք մանաւանդ աշխատութիւնը:

Առանց սիրոյ եւ աշխատութեան մարդ իսկապէս թշուառ է:

Ինչ համեմատութեամբ որ մարդուն սէրը եւ աշխատութիւնը նուազի, նոյն համեմատութեամբ իր տառապանքը պիտի աւելնայ: Ասոր հակառակ, ինչ համեմատութեամբ որ իր սէրը եւ աշխատութեան սէրը աւելնայ նոյն համեմատութեամբ իր տառապանքը պիտի նուազի:

Իմ կողմէ խոստովանութիւն մը, կարծեմ բաւական աղէկ փաստ պիտի ծառայէ ըսածիս: Ուսուցչա-

կան զբաղումիս մէջ ապերջանիկ եղած եմ՝ կամ աւելի տառապած, երբ չեմ սիրած զորոս եւ Ձեզ:


Բարեբաղդաբար քիչ թիւ կը կազմեն այդ օրերը, այնքան քիչ՝ որ իրենց ճիշդ օրերովը ու թուականովը կը յիշեմ զանոնք եւ թերեւս այդ պատճառաւ մտքիս վրայ խորունկ տպաւորութիւն թողած են անոնք:

Ուրեմն կուզէք ձեր երջանկութիւնը սիրեցէք եւ աշխատեցէք:

Ձեր սրտին մէջ սէրը թճող թագաւորէ, աշխատութիւնը ձեր մտքին ու ձեռքին միակ զարդը ըլլայ, իսկ ուղղամտութիւնը ձեր ուղեցոյցը:

Երթա՛ք բարով, Տէրը Ձեզի հետ ըլլայ: Եթէ ուղիղ ճամբէն չի սայթայքիք, վստահ եղի՛ք որ Տէրը միշտ Ձեզի հետ պիտի ըլլայ... Երթա՛ք բարով:





5-40

22864-22870

«Ազգային գրադարան»



NL0056510

«Ազգային գրադարան»



NL0056513

«Ազգային գրադարան»



NL0056509

«Ազգային գրադարան»



NL0056512

«Ազգային գրադարան»



NL0056508

«Ազգային գրադարան»



NL0056511

«Ազգային գրադարան»



NL0056507

2013

